

# ԻՆՉ Է EARLY START-Ը



Հաշմանդամություն ունեցող կամ զարգացման հապաղման ռիսկի խմբում գտնվող նորածիններին և քայլել սովորող երեխաներին և նրանց ընտանիքներին վաղ միջամտության համակարգված ծառայությունների նահանգային միջգերատեսչական համակարգ: **Տարածաշրջանային կենտրոնները բաց են և ընդունում են դիմումներ Early Start-ի համար COVID-19-ի ժամանակ:** Եթե կասկածում եք, որ նորածնի կամ քայլել սովորող երեխայի մոտ առկա է զարգացման հապաղում կամ ոչ տիպիկ զարգացում, ապա.

## Պարզեք

Հնարավոր է երեխան կարիք ունենա վաղ միջամտության ծառայությունների, եթե.

- Նրա մոտ առկա է զարգացման հապաղում ճանաչողական, հաղորդակցական, սոցիալական կամ հուզական, հարմարվողական կամ ֆիզիկական և շարժումների զարգացման մեկ կամ մի քանի ոլորտներում, ներառյալ տեսողությունը կամ լսողությունը,
- Ունի հայտնի էթիոլոգիայի հաստատված ռիսկային վիճակ, որը ամենայն հավանականությամբ կհանգեցնի զարգացման հապաղման, կամ
- Նա գտնվում է որակավորված անձնակազմի կողմից ախտորոշված կենսաբժշկական բարձր ռիսկի գործոնների համադրությամբ պայմանավորված զարգացման էական խանգարումներ ունենալու մեծ ռիսկի տակ:

## Դիմեք

- Տեղամասի տարածաշրջանային կենտրոններ <https://www.dds.ca.gov/rc>
- Տեղամասի կրթական գործակալություն <http://www.cde.ca.gov/sp/se> (բացառապես տեսողական, լսողական և օրթոպեդիկ խանգարումներ ունեցող երեխաների համար)
- 45 օրվա ընթացքում տարածաշրջանային կենտրոնը կամ տեղամասի կրթական գործակալությունը.
  - Կնշանակի ծառայությունը համակարգողի
  - Կստանա ծնողական համաձայնություն
  - Կհամակարգի և կավարտի գնահատումները
  - Կմշակի ընտանիքի ծառայության անհատական ծրագիր (ԸՄԱԾ - Individualized Family Service Plan - IFSP) ուժերը և ծառայություններն ընդլայնելու նպատակով:
  - Կտրամադրի ծառայություններ տանը կամ ամբուլատոր պայմաններում
- Դիմելու ընթացակարգի մասին ավելին իմանալու համար այցելեք <https://www.dds.ca.gov/services/early-start/what-is-early-start>

## Եղեք ներգրավված

- Բուժման պլանավորման ընթացքում համագործակցեք համայնքային ռեսուրսների հետ՝ ապահովելով գրավոր հաղորդակցություն:
- Ապահովեք մասնակցություն կոնֆերանս զանգի միջոցով,
- Ներկայացեք ԸՄԱԾ ժողովների, կամ
- Ներկայացրեք տեղեկատվություն և ստացեք հետադարձ կապ գնահատող թիմից:
- Դուք կարող եք լինել օղակ ընտանիքների և վաղ միջամտության գործընթացի միջև: Ընտանեկան աջակցության մասին տեղեկությունների համար այցելեք ընտանեկան ռեսուրսային կենտրոնների (Family Resource Centers) վեբ կայք՝ <http://www.frcnca.org>

## Հետևեք արդյունքներին

- Ուսումնասիրությունները պարզել են, որ այն երեխաները, ովքեր մասնակցում են բարձրորակ վաղ միջամտության/վաղ մանկական զարգացման ծրագրերին, ունեն
  - Հատուկ կրթության և այլ մասնագիտացված ծառայությունների ավելի քիչ կարիք,
  - Ավելի լավ լեզվական ունակություններ,
  - Բարելավված սնուցում և առողջություն, և
  - Ավելի քիչ են ենթարկվում բռնության և արժանանում արհամարհանքի:



California Department of Developmental Services



Early Start-ի դիմումների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու և/կամ հարցերի դեպքում կապվեք Early Start BabyLine 1-800-515-BABY հեռախոսահամարով կամ ուղարկեք էլ. փոստ [EarlyStart@dds.ca.gov](mailto:EarlyStart@dds.ca.gov)-ին: